

## ՍՏԵՓԱՆ ՄԱԼԽԱՍՅԱՆՑ

(1857 — 1947)


Լ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ստեփան Սարգսի Մալխասյանցի անունը հայ հասարակայնությանը ծանոթ է դեռևս անցյալ դարի 70-ական թվականներից: Նրա ստեղծագործական կյանքի երկար ու փայլուն ուղին սկսվեց գրական ինքնուրույն ու թարգմանական գործերով և ավարտվեց արժեքավոր ու ծավալուն հայագիտական ուսումնասիրություններով:

Մեծ հայագետ Մալխասյանցը ծնվել է 1857 թ. նոյեմբերի 7-ին, Ախալցխայում, արհեստավորի ընտանիքում: Տարրական կրթությունը ըստացել է տեղի Կարապետյան դպրոցում, ապա սովորել է ռուսական գավառական ուսումնարանում, որն ավարտել է 1874 թ.: Նույն թվականին նա դառնում է էջմիածնի նորաբաց Էներգյան ճեմարանի անդրանիկ սաներից մեկը: 1878 թ. էջմիածնի ծախսերով Մալխասյանցը գործուղվում է Պետերբուրգ և հայագիտության մեջ մասնագիտանալու նպատակով ընդունվում տեղի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը, որը, սակայն, 1881 թ. ստիպված է լինում թողնել և վերադառնալ գրական աշխատանքով: 1887 թ. վերադառնում է և շարունակում ուսումնառությունը որպես ստացրոնար ուսասող: 1888 թ. ավարտում է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետի հայ-սանսկրիտ և հայ-վրացական բաժինները՝ ստանալով թեկնածուի աստիճան: Պետերբուրգի համալսարանում սովորելիս Մալխասյանցն աշակերտում է նաև իր ժամանակի ճանաչված հայագետ Քերովը և Պատկանյանին:

Ստանալով հայագիտական բաղձակողմանի կրթություն, Մալխասյանցը վերադառնում է հայրենիք և նվիրվում մանկավարժական աշխատանքի: Նա իր 50-ամյա մանկավարժական-դաստիարակական գործունեության ընթացքում դասավանդել և տարբեր ժամանակներում որպես տեսուչ աշխատել է Ախալցխայի Կարապետյան, Թիֆլիսի ներսիսյան դպրոցներում, էջմիածնի Էներգյան ճեմարանում և այլուր:

1921 թ. թողնելով մանկավարժական աշխատանքը Մալխասյանցն ամբողջապես նվիրվում է գիտության, հատկապես հայերեն բացատրական բա-



ուսարան կազմելու գործին: 1940 թ. գիտական գործունեության համար Մալխասյանցին շնորհվում է բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան՝ honoris causa. 1943 թ., երբ ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի բազայի վրա կազմակերպվում է ՀՍՍՌ գիտությունների ակադեմիան, վերջինիս հիմնադիր կազմի անդամ է հաստատվում նաև Մալխասյանցը: 1946 թ. «Հայերեն բացատրական բառարան» կապիտալ աշխատության համար Մալխասյանցն արժանանում է պետական մրցանակի:

Ստեփան Մալխասյանցը վախճանվեց 1947 թ. հուլիսի 21-ին, Երևանում, 90 տարեկան հասակում:

\*

Մալխասյանցի գրական-գիտական վաստակը մեծ է և իր շոշափած գիտական հարցերով բազմակողմանի. այն հիմնականում բնագրի է շորս բնագավառ՝ գրականություն, պատմա-բանասիրություն, լեզվաբանություն և բարանագրություն:

Գեոևս Պետերբուրգի համալսարանում սովորելու տարիներին Մալխասյանցը շարունակում է թղթակցել «Արարատ», «Մշակ» և այլ պարբերականներին, տպագրելով ինքնուրույն և թարգմանական բանաստեղծություններ ու հոդվածներ: Նա գերմաներենից թարգմանել է Վ. Շերստիցի «Լիր թագավոր» (1887 և 1888), «Մակրեթը» (1892), Գ. Էրերսի «Մարդ եմ» (1898) վեպը:

Մալխասյանցը հիմնավորապես գիտեր գրաբարը, և բնդհանրապես հայերենն իր բոլոր շրջաններով, մի կարևոր հանգամանք, որը հնարավորություն էր տալիս նրան իրագործելու հայ պատմիչներ Ստեփանոս Տարոնեցու, Ղևոնդ երեցի, Ղազար Փարպեցու, Ազաթանգեղոսի, Մովսես Խորենացու, Սեբեոսի, Ամիրզովյաթ Ամասիացու երկերի քննական հրատարակությունները: Նրա շնորհիվ յայն հասարակայնությանը մատչելի են դարձել Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի Հայոց պատմությունները՝ աշխարհաբար, իսկ Սեբեոսի Պատմությունն ու Սիմեոն Երևանցու «Ջամբոթ»՝ ուսերեն թարգմանությամբ: Բացի այս աշխատություններից նա ունի արժեքավոր գիտական ուսումնասիրություններ հայ պատմիչների մասին, ինչպես՝ «Ուսումնասիրություն Փավստոս Բուզանդի պատմության» (1896), «Սեբեոսի պատմությունը և Մովսես Խորենացի» (1899) և «Խորենացու առեղծվածի շուրջը» (1940): Հատկապես վերջինը մեծ ծառայություն էր հայ պատմագիտությանը. այդ ուսումնասիրությամբ նա, ի հակադրություն Խորենացուն ավելի ուշ շրջանի պատմիչ համարողների, գիտականորեն հիմնավորեց ու ապացուցեց նրա հինգերորդ դարի պատմիչ լինելը:

Խորենացու հարցին նվիրված գործերից (օտար և հայ հեղինակների) Մալխասյանցը հիմնականում բնություն է տուել ն. Ակինյանի «Ղևոնդ Երեցի և Մովսես Խորենացի» (Վիեննա, 1930) և ակադ. Հ. Մանանդյանի «Խորենացու առեղծվածի լուծումը» (Երևան, 1934) ուսումնասիրությունները: Ակինյանի գրքի մասին խոսելիս Մալխասյանցը սահմանափակվում է սոսկ բովանդակության շարադրմամբ, առանց քննարկելու նրա դրույթները: Մալխասյանցը մանրամասն բնություն է ենթարկում Մանանդյանի աշխատությունը. մերժում նրա տեսակետները: Նա Խորենացու հարցի շուրջը իր կարծիքները հիմնականում շարադրել է գրքի հավելվածում, որի առաջին ենթարժանում բնություն է բաղմաթիվ փաստերով հաստատում է, որ Խորենացին իսկապես

Մ' դարի 80-ական թվականների պատմիչ է: Նշում է, որ մեղ հասած Պատմությունը սկզբնագիրը չէ, այլ խմբագրություն է ավելի ուշ շրջանի. Պատմության մեջ եղած հետագա դարերին վերաբերող տեղեկությունները ավելացված են գրիչների կողմից:

Մալխասյանցի բանասիրական վերջին աշխատությունները լույս ընծայվեցին հետմահու՝ ՀՍՍՌ դիտությունների ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից: 'Իրանցից առաջինը՝ «Առականեր, ավանդություններ, անեկդոտներ» ժողովածուն է (1958), որը հրատարակության էր պատրաստել հեղինակը դեռ 1938 թ.: Ժողովածուն պարունակում է Ախալցխայի բարբառով ժողովրդական առականեր, ավանդություններ, անեկդոտներ, շափավոր խոսքեր ու ասմունքներ (թվով 141), որոնք Մալխասյանցը լսել էր իր հորից: Այս ժողովածուն հետաքրքրական է ոչ այնքան իր բանահյուսական նյութերի նորությամբ, որքան որպես բարբառային նյութ, քանի որ նրա անմիջական աղբյուրը՝ հայրը, դրանք պատմել է էրզրումի բարբառով, որը դեռևս չէր ենթարկվել գրական լեզվի, ինչպես նաև ուսերենի ազդեցությանը, ուստի արժեքավոր է իր անաղարտությամբ: Ժողովածուն ավելի արժեքավոր է գտնում Մալխասյանցի տված ծանոթագրություններով, մանավանդ նրա բառագրբույլով: Վերջինս ընդգրկում է 300 բառ. տաճկերեն բառերի մոտ տրված է նաև նրանց հայատառ գրությունը:

1961 թ. նույն ինստիտուտը հրատարակեց Մալխասյանցի «Մատենագիտական դիտողություններ» գրքույկը: Այստեղ Մալխասյանցը աշխատում է որոշ իմաստով լրացնել Մ. Արեղյանի «Հայոց հին գրականության պատմություն» այն մասերը, որտեղ հեղինակը մի քանի աշխատությունների կամ հարցերի մասին չի խոսում՝ կամ որոշ հարցերի մասին չի բերում եղած բոլոր կարծիքները՝ իր նյութից, նպատակից դուրս համարելով դրանք:

Մալխասյանցը մեծաթեք գիտական ուսումնասիրություններ ունի նվիրված հայոց լեզվի տեսության տարբեր հարցերին: Նրան զբաղեցրել են հայերենի ձևաբանությունը, շարահյուսությունը, բառային կազմը, ուղղագրությունը: «Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները» (1891 և 1910), «Գրաբարի համաձայնությունը» (1892) միմյանց լրացնող լեզվաբանական-հայագիտական արժեքավոր ուսումնասիրություններ են, որոնք երկար ժամանակ հանդիսացել են գրաբարի ձևաբանության և շարահյուսության լավագույն ձեռնարկները: «Գրաբարի համաձայնությունը» գրաբարի շարահյուսության միակ դասընթացն է՝ գրված արևելահայերենով:

Ներսիսյան գպրոցում դասավանդելիս Մալխասյանցը զգում է «քերականության հարմարավոր ձեռնարկի պակասությունը, այնպիսի քերականության, որ լեզվի ստուգաբանության և համաձայնության կանոններն առաջարկեր աշակերտներին ոչ թե իբրև անգիր սովորելու նյութ, այլ բացատրեր և, աշակերտին մատչելի շափով, հետադոտեր այդ կանոնները». ավելին՝ նա պահանջում է, որ աշակերտը զգա, «որ լեզուն մի կամայական երևույթ չէ, այլ գիտություն է, հիմնված, ինչպես և ամեն գիտություն, որոշ օրենքների վերա»<sup>1</sup>: Այդպիսի քերականական ձեռնարկի փորձ առաջին անգամ արել է Կ. Կոստանյանցը («Գրաբար բայերի խոնարհումը մի աղյուսակի մեջ» և

<sup>1</sup> Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն յ ց . Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները, Քիֆլիս, 1910, Երկու խոսք. էջ ա:

«Գրաբարի հոլովումը մի աղյուսակի մեջ»), սակայն մեթոդական առումով այն չի բավարարում Մալխասյանցին, և նա կազմում է մի նոր ձևոնարիկ, որի մասին ինքը գրում է. «Մերը երկրորդն է, որ յուր նախորդից բավական տարբեր է թե՛ նյութի բովանդակությամբ, թե՛ տեսականով և թե՛ ավանդելու ոճով»<sup>2</sup>: Այս ձևոնարիկում տալիս է նաև նախդիրները, որովհետև նրանց «Տարբեր նշանակությունները այլևայլ հոլովների հետ գործածվելիս՝ մեծ դժվարությամբ են բերում աշակերտները»<sup>3</sup>: Սակայն Մալխասյանցի բմբռնմամբ քերականության սահմանները շատ ավելի ընդարձակ են, քան նորինգրիկ է իր առաջին ձևոնարիկի մեջ: «Մենք չկարողացանք ավելի ընդլայնել ձայնագիտությունը և մտցնել համեմատության նյութ նոր գրականական լեզվից և գավառական բարբառներից, նույնպես չվետեղեցինք բացառություններ թե՛ շեշտարանության և թե՛ հոլովումի ու խոնարհումի մեջ և չհամեմատեցինք նոր լեզվային ձևերը գրաբարի ձևերի հետ, թողնելով սոքա և ուրիշ շատ հետաքննական նյութեր ապագա ավելի ազատ ժամանակի»<sup>4</sup>: Այդ պակասը նա յրացրեց իր մյուս արժեքավոր դասագրքով («Գրաբարի համաձայնությունը»), որը կազմում է նախորդի երկրորդ մասը և նույնպես նախատեսված է աշակերտների համար: Թեև հեղինակը զգուշացնում է, որ «Համաձայնության տարրական սկզբունքներն ավանդելու շրջանից դուրս չենք եկել»<sup>5</sup>, այնուամենայնիվ այս դասագրքի «ներածությունը» գիտական լուրջ ուսումնասիրություն է, որի մեջ Մալխասյանցն արտահայտում է ընդհանուր լեզվաբանությանը և հայերենին վերաբերող իր տեսակետները: Նա առաջին հայ լեզվաբաններից էր, որ արձագանքելով եվրոպացի հայագետներին և կիրառելով պատմա-համեմատական մեթոդը, ընդունեց, որ հայերենը պատկանում է հեղվորոպական լեզվախմբին: Լեզվի զարգացումը նա համարում է ժողովրդի մտավոր ու տնտեսական զարգացման հետևանք: Ընդունում է, որ նախահայրենիքում բնակվող ժողովուրդը տարբեր ժամանակներում, բայց ղեկ նախապատմական դարերում, գաղթել է տարբեր կողմեր, «նոր հասարակական կազմակերպություն ընդունելով՝ ապրել է առանձին ցեղերով և ազգերով»<sup>6</sup>:

Մալխասյանցը լեզվի զարգացման չափանիշ է ընդունում նրա հին լինելը, այսինքն «Լեզուն որչափ շատ է գործածվում, կամ այլապես՝ որչափ հին է՝ այնքան ավելի է զարգանում»<sup>7</sup>: Այդ տեսակետից ելնելով նա հայերենը հեղվորոպական լեզուների շարքում ամենահին և ամենազարգացած լեզուներից մեկն է համարում: Այդ զարգացման, փոփոխությունների պատճառով էլ հայերենում բառերն ու քերականական ձևերը ավելի են հեռացել նախնական ձևերից և ստացել «հատուկ, ազգային կերպարանք», մինչդեռ որոշ լեզուներ, ինչպես՝ ղենդերենը և սլավոններենը, շատ ավելի մոտ են սկզբնական լեզվային ձևերին, «ուրեմն համեմատաբար քիչ են զարգացել»<sup>8</sup>: Սակայն զարգացումը շարունակվում է և «Ինչպես հնդկ-եվրոպական լեզուներն սկզբում բարբառներ էին կազմում նախալեզվի վերաբերությամբ՝ այնպես էլ

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 9:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> Ստ. Մալխասյանց, Գրաբարի համաձայնությունը, Քիֆլիս, 1892, ներածություն, էջ 7:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 8:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 10:

նորա առանձին լեզուներ դառնալով՝ իրանք եղան մայր լեզու և տվին իրանց ճյուղերը կամ բարբառները»<sup>8</sup>։ Հայերենը նույնպես նախապատմական ժամանակներում անշուշտ ունեցել է այլևայլ բարբառներ, թեև դրանց մասին ոչ մի հետազոտություն կամ արձանագրություն մեզ չի հասել։ Այդ բարբառների առաջացման պրոցեսում իր դերն է կատարել նաև Հայաստանի պատմական, վարչական և աշխարհագրական մասնատվածությունը։ Մալխասյանցը ընդունում է հայերենի բարբառների գոյությունը նաև V դարում, նույնիսկ, ինչպես ինքն է գրում, «ոսկեդինիկ դարի մատենագիրների» մոտ։

Գրաբարի հետագայում գործածությունից դուրս գալը հիմնավորում է նրանով, որ «նորա մայր լեզուն էլ (սկզբնական հայերենը)... 2—3 հազար տարվա ընթացքում ենթարկվել էր ձայնագիտական և քերականական բազմաթիվ փոփոխությունների և այլևայլ բարբառներ առաջ բերելով՝ ինքը մեռել էր»<sup>9</sup>։ Մալխասյանցն այն կարծիքն է հայտնում, որ Սուրբ գրքի՝ Սահակի և Մեսրոպի թարգմանության լեզվի հիմքում ընկած է արարատյան բարբառը։

Բացի գուտ քերականագիտական հարցերից, Մալխասյանցին վրադեցրել և խիստ անհանգստացրել են հայերենի անաղարտությունն ու մաքրությունը՝ բնորոշում փնտրող օտարամոլության։ Հիշենք նրա «Մեծ վտանգի հանդեպ»<sup>10</sup> տաղնապով լի հոգվածը, որն ուղղված է օտար լեզուներից անհարկի ու ավելորդ փոխառությունների և մույրենի լեզուն ձուլման ենթարկելու վտանգի դեմ։

Անվանի հայագետ բանասերն իր դիտական-ստեղծագործական գործունեությունը պսակեց կյանքի հասուն տարիներին ձեռնարկած «Հայերեն բացատրական բառարանով»<sup>11</sup>։ Սակայն մինչև բառարանագրական գործնական աշխատանքի անցնելը նա սկզբում հանդես է եկել որպես տեսաբան-բառարանագետ։

Բառարանագրության նկատմամբ հետաքրքրությունն սկսվում է Ս. Մալխասյանցի գործունեության վաղ շրջանից, երբ նա հանդես է գալիս հրատարակվող բառարաններին նվիրված մատենախոսականներով և տարբեր առիթներով արտահայտում բառարանագրական իր տեսակետներն ու կարծիքները՝ թե՛ հայերեն և թե՛ թարգմանական երկլեզվյան բառարանների կազմության սկզբունքների մասին։ Այդ կարգի հոգվածներում նա բառարանագրից պահանջում է հմտություն, բարեխղճություն իր աշխատանքի և մեծ ուշադրություն՝ ոճաբանության, ժողովրդական խոսքի, կենդանի ոճերի, առածների և դարձվածների նկատմամբ։

Թարգմանական բառարաններին վերաբերող նրա զբախոսականներից ուշադրավ են Ա. Հովհաննիսյանի և Հ. Դաղբաշյանի ոուս-հայերեն բառարանների քննադատությունները։

1888 թ. լույս է տեսնում Աբխսոզոմ Հովհաննիսյանի ոուս-հայերեն բառարանը, որի առիթով Մալխասյանցը հանդես է գալիս իր արժեքավոր մատենախոսականով։ Ռուս-հայերեն առաջին բառարանների հրատարակությունից

<sup>8</sup> Նույն տեղում։

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 11։

<sup>10</sup> Տե՛ս «Գործ», Բաբու, 1917, N 2, մաս Բ, էջ 49—67, N 3, մաս Բ, էջ 50—65։

<sup>11</sup> Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, 1944, հատ. 2, 1944, հատ. 3, 1944, հատ. 4, 1945, Երևան, Երկրորդ, լուսատիպ հրատարակչությանը լույս է տեսել Բեյրութում, 1955—1956 թթ.։

արդեն անցել էր մոտ 100 տարի: Մալխասյանցը ողջունելով այս բառարանի լույս ընծայումը և ճիշտ գնահատելով ուսուցիչների դերը մեր լեզվի զարգացման մեջ, գրում է՝ «Ռուսերեն լեզուն մեր կյանքում այժմ կարևոր դեր է կատարում, որի շրջանը հետզհետե ընդարձակվելու վրա է»<sup>12</sup>: Այնուհանդերձ նա զգուշացնում է, որ պետական լեզուն (ուսուցիչներ) իմանալը դեռ չի նշանակում մայրենի լեզուն (հայերենը) մոռանալ կամ գործածությունից հանել:

Այս դիրքերից էլ Մալխասյանցը լուրջ քննադատության է ենթարկել Հովհաննիսյանի և Գաղբաշյանի բառարանները: Մալխասյանցը Հովհաննիսյանի բառարանի թերություններից մեկը համարում է այն, որ բառարանում կան բազմաթիվ անգործածական բառեր, իսկ շատ կարևոր, գործածական բառեր դուրս են մնացել նրա բառացանկից:

Բառացանկը կարելի է կազմել խիստ այրբենական կարգով կամ բնային (փնջային) սխտեմով: Հովհաննիսյանի բառարանը այրբենական կարգով է, իսկ Գաղբաշյանինը՝ բնային: Մալխասյանցը Գաղբաշյանին քննադատում է այս հարցում, քանի որ բնային սխտեմը ղեկավարացնում է բառարանից օգտվողի աշխատանքը: Նա ցույց է տալիս նաև բերականական նշումների կարևորությունը: Մալխասյանցն իրավացիորեն պահանջում է, որ թարգմանությունը տրվի անսխալ և արտահայտվի նույն խոսքի մասով, մինչդեռ Հովհաննիսյանը ուսուցիչներին ածականների թարգմանությունը տալիս է հայերեն բառի սեռական հոլովով: Նա չի խրախուսում թարգմանվող բառի դիմաց մի շարք հոմանիշներ դնելը, որովհետև այս դեպքում (քննարկվող բառարաններում) այդ բազմաթիվ հոմանիշներից բոլորը չէ, որ լրիվ արտահայտում են օտար բառի տվյալ իմաստը:

Թարգմանությունը պետք է տրվի մաքուր դրական, պարզ լեզվով: Հովհաննիսյանի մոտ թարգմանությունը երբեմն ուսուցիչներին պիտակաբանի շափ անծանոթ է հայ ընթերցողների մեծամասնությանը: Մալխասյանցը չի խրախուսում բառարանի թարգմանական բաժնում ավելորդ օտար բառերի օգտագործումը: Հովհաննիսյանի կազմած բառարանի հիմնական թերություններից մեկը նա համարում է ուսուցիչների պակասը:

Ռուս-հայերեն բառարաններից բացի, Մալխասյանցի ուշադրությունը գրավել է մի այլ թարգմանական բառարան՝ Բրիգոն Լուսինյանի Ֆրանսերեն-հայերեն բառարանը: Վերջինս իր տեսակով առաջինը չէր մեր իրականության մեջ, Մալխասյանցը այն համեմատում է նախորդներից լավագույնի՝ Նորայր Բյուզանդացու բառարանի հետ և նշում Լուսինյանի բառարանի առավելություններն ու թերությունները: Այսպես՝ նոր բառարանի առաջին առավելությունը համարում է նկարագրողությունը, ապա բառացանկի և բառերի բացատրության ավելի հաջող լինելը: Եթե Բյուզանդացու բառարանը մեծ մասամբ միայն գրական բառերն է ընդգրկում, ապա Լուսինյանն ավելացնում է մի շարք մասնագիտական տերմիններ, որոնց մեջ կան այնպիսիք, որոնք բացակայում են նույնիսկ Քաջունու մասնագիտական բառարանում:

Մալխասյանցը նշում է, որ Լուսինյանը, Բյուզանդացու նման, աշխատում է ֆրանսերեն բոլոր բառերի դիմաց տալ անպայման հայերեն բառ, ուստի վերջինիս բացակայության դեպքում՝ ստիպված է ինքը կերտել: Սակայն Բյուզանդացու մոտ շատ հաճախ նորաստեղծ բառերն ավելի հաջող են, և բացի այդ,

<sup>12</sup> «Արար», 1889, դիրք Ա, էջ 139.

Բյուզանդացին աստղանիշով տարբերակում է դրանք: Լուսինյանի կազմած բառերի զգալի մասը Մալխասյանցը անհաշոդ է համարում: Բառարանի նըշված թերություններից մեկը, որ դարձյալ ըխում է հեղինակի բառարանադրական սկզբունքներից, դա հայերեն բառերի կուտակումն է թարգմանության բաժնում: Լուսինյանի բառարանի մյուս թերությունը «արդեն բուն հայերեն լեզվագիտության է վերաբերում: Հեղինակը գործ է ածում շատ անգամ այնպիսի բառեր, որոնց նշանակությունը խիստ կասկածելի է, կամ որոնք միանգամայն անծանոթ են, երբեմն նույնիսկ սխալ՝ կամ նշանակությամբ կամ քերականական ձևով»<sup>13</sup>: Հաճախ դրաբար դարձվածի կամ բառի մոտ Լուսինյանը դնում է աշխարհաբար դարձված կամ բառ, որը իր նշանակությամբ համապատասխան չէ դրաբարին:

Մալխասյանցը պահանջում է, որ թարգմանական բառարանում բառի դիմաց տրվի նրա թարգմանությունը մեկ կամ երկու բառով, ինչպես հետագայում այդ արվում է իր մասնակցությամբ կազմված՝ երկաթուղային տերմինների ուս-հայերեն և հայ-ուսերեն բառարաններում: Այդ իսկ պատճառով նա Դադրաշյանի ուս-հայերեն բառարանը բնութագրել է այսպես. «ոչ զուտ բացատրական է, ոչ լուկ թարգմանական, այդ երկուսի խառնուրդ է»:

Բացի թարգմանական երկլեզվյան բառարաններից Մալխասյանցը անդրադարձել է նաև հայերեն միլեզվյան բառարաններին: Այսպես՝ ողջունելով և «գովեստի ու շնորհակալությունների» արժանի գործ համարելով Մահակ Ամատունու «Հայոց բառ ու բան» (1912) բարբառային բառարանը, նա նշում է նաև նրա թերությունները, որոնցից առաջինը շեշտի հարցն է: Ինչպես հայտնի է, մեր բարբառներում բառի շեշտը իր տեղով չի համընկնում գրական լեզվի շեշտի հետ: Ամատունու բառարանի ամենամեծ թերությունը Մալխասյանցը համարում է շեշտի բացակայությունը, իսկ երկրորդը՝ այն, որ նա չի պահպանել բարբառային արտասանության ձևերը, բարբառային բառերը տալով գրական լեզվի ուղղագրությամբ: «Հայոց բառ ու բանը» ղնահատելիս Մալխասյանցը նշում է, որ «գրքի զեղեցիկ հատկություններից մեկը կազմում է հարուստ ոճաբանությունը»<sup>14</sup>, որին հետագայում ինքը մեծ տեղ է տվել իր հայերեն բացատրական բառարանում:

Մալխասյանցն անդրադարձել է նաև ակադեմիկոս Հրաշյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարանին», որը նրա խոսքերով ասած բազմավաստակ հայագետի «բոլոր գիտական գործերի թագն ու պսակն է»<sup>15</sup>:

Քանի որ արմատական բառարանը չունի իր նախորդը, ուստի Մալխասյանցը հիշատակում է հայերենի ստուգաբանությանը նվիրված միայն Հյուբերտի և Լազարդի համապատասխան ուսումնասիրությունները և բազմակողմանիորեն ղնահատելով բառարանը եզրակացնում է, «որ հայերենի բառարանագրության դավառում Մեծ Հայկազյան բառարանից հետո, մոտ հարյուր տարվա ընթացքում, լույս չէ տեսել մի գործ հայերեն կամ օտար լեզուներով, որ լիակատարությամբ, հմտությամբ և կարևորությամբ հավասարեր պրոֆ. Աճառյանի այս գործին»<sup>16</sup>:

<sup>13</sup> «Մուրճ», 1901, № 1, էջ 211.

<sup>14</sup> «Մշակ», 1913, № 75.

<sup>15</sup> «Մարտակոչ», 1926, № 86.

<sup>16</sup> Նույն տեղում, N 81.

Մալխասյանցը մամուլում անդրադարձել է նույն այլ բառարանների, ինչպես Քաջունու ֆրանսերեն-հայերեն դիտական բառարանը<sup>17</sup>, ապա 1892 թ. Մոսկվայում Խ. Հովհաննիսյանի հրատարակած Եղիշեի Վարդանանց Պատմության վերջում տրված հայ-ռուսերեն բառարանը:

«Քառգիրքը կազմում է հեղինակի ղլխավոր աշխատությունը և զբքի ամենահետաքրքրական մասը: Հեղինակն այստեղ ամփոփել է Եղիշեի Պատմության մեջ պատահած բառերը, բացատրել է նոցա նշանակությունը ռուսերեն լեզվով, շատ բառերի մոտ դրել է արմատները՝ սանսկրիտ, պահլավիկ, պարսիկ և հույն լեզուներով. շատ բառերի տակ էլ մեջ է բերել հատվածներ Եղիշեի Պատմությունից, երբեմն նաև խորհանցուց (և իրանից շարադրված), որոնք և թարգմանել է ռուսերեն»: Բայց, ռզժբախտաբար նա ամենաթերին, ամենապակասավորն է զբքի մյուս մասերից, ոչ միայն բազմաթիվ բառերի կիսատու սխալ բացատրությամբ, այլև ընդհանուր ուղղության, ծրագրի կողմից»<sup>18</sup>:

Մալխասյանցը հեղինակին իրավացիորեն մեղադրում է այն բանում, որ նա զրարար տեքստի համար ծանոթագրություն է տալիս աշխարհաբար, իսկ բառարանում զրարար բառերը թարգմանում է ռուսերեն:

Մենք հատկապես կանգ առանք Մալխասյանցի որոշ զրախոսականների վրա, քանի որ նա բառարանագրության հարցերին նվիրված առանձին ծավալուն ուսումնասիրություն չունի, այդ իսկ պատճառով հիշեցինք, հիմնականում, այն մատենախոսականները, որոնք շոշափում են բառարանագրության տեսական բազմաթիվ հարցեր և բացահայտում Մալխասյանցի բառարանագիտական տեսակետներն ու հայացքները:

Մալխասյանցը չի սահմանափակվել միայն բառարանագրության տեսությամբ և որիշների կազմած բառարանները գնահատելով: Տարիների ընթացքում ծրագրան աշխատանքով կուտակած տեսական պաշարն իր գործնական արտահայտությունն է գտնում գիտնականի բառարանագրական աշխատանքում, որին առաջին անգամ նա մասնակցել է 1919 թ.: Դատավարությունները հայերեն վարելու համար մեծ կարիք էր զգացվում համապատասխան բառարանի:

Ռուս-հայերեն իրավաբանական տերմինների բառարանն առաջին անգամ հրատարակվել է Թիֆլիսում, որը շուրջ 1400 բառ է պարունակում: Մի խումբ մասնագետներ կազմել են լաւարանի տարրեր մասերը, ապա խմբագրել են բոլորը միասին, խմբագրական աշխատանքների մեջ ներգրավելով երկու խոշոր հայագետների՝ Մանուկ Աբեղյանին և Ստեփան Մալխասյանցին: Վերջիններիս կատարած աշխատանքի մասին բառարանի առաջաբանում ասված է. «Կան մոտ հարյուր բառեր, կեսից ավելին նոր տերմիններ, որոնք ընդունված են նրանցից մեկի կամ մյուսի առաջարկով»<sup>19</sup>:

Սովետական իշխանության առաջին տարիներին հատկապես ուշադրություն է դարձվում հայերենը մասնագիտական տերմիններով հարստացնելու վրա, ուստի և առաջին հերթին կազմվում և յույս են ընծայվում երկլեզվյան մասնագիտական բառարաններ, որոնցից են «Ռուս-հայերեն բառարան երկաթուղային տերմինների» և նույն բառարանը շրջած՝ «Հայ-ռուսերեն բառա-

<sup>17</sup> Տե՛ս «Երձագանք», 1891, N 1, էջ 56—57:

<sup>18</sup> «Մուրճ», 1892, N 5, էջ 765:

<sup>19</sup> «Ռուս-հայերեն իրավաբանական առձեռն բառարան», Թիֆլիս, 1919, Առաջաբան, էջ 9:



րան երկաթուղային տերմինների» (հրատարակված 1925 թ.): Հիշված բառարանները կազմող հանձնաժողովի մեջ էր նաև Մալխասյանցը: Այս շրջանը կարծես նախապատրաստական փուլ էր Մալխասյանց-բառարանագրի համար: Եւ բառարան կազմելու բուն աշխատանքին ձեռնարկում է 1922 թ. և սկսում է կազմել հայերեն բացատրական բառարանը, որը նրա աշխատությունների գլուխ-գործոցն է գառնում:

Լեզվի մաքրությունը պահպանելու և այն վերահսկելու տեսակետից մեծ կարևորություն ունեն բացատրական բառարանները, առանձնապես ժամանակակից լեզվի բացատրական բառարանը, որի անհրաժեշտության մասին նշել է Վ. Բ. Լենինը դեռ 1920 թ.<sup>20</sup> ռուս գիտնականների առաջ խնդիր դնելով կարճ ժամանակում կազմել «իսկական ռուսաց լեզվի բառարան, ասենք, այնպիսի բառերի բառարան, որոնք գործ են ածվում այժմ և կլասիկների կողմից, Պուշկինից մինչև Գորկին»<sup>20</sup>: Լեզվի լիակատար բացատրական բառարանի հրատարակությունը, որն իր մեջ ամփոփի ամբողջ բառագանձը՝ առաջնակարգ կուլտուրական գործ է: Այդպիսի բառարան կազմելն էլ հենց եղել է Մալխասյանցի նպատակը:

Հայ իրականության մեջ կազմվել և հրատարակվել են բառարանների հայտնի համաշխարհային տեսակները՝ և՛ միլեզվյան և՛ բազմալեզվյան, որոնցից շատերը (սնոր Հայկազյան բառարանը, Հր. Աճառյանի «Հայերեն արձատական», «Հայոց անձնանունների» բազմահատոր, Զախչախյանի, Նորայր Բյուղանդացու թարգմանական բառարանները) իրենց տեսակի մեջ չգերազանցված օրինակներ են: Այժմ պարզ է, թե ինչպիսի հմտություն էր պահանջվում Մալխասյանցից՝ իր նոր խոսքն ասելու մի այդպիսի հարուստ փորձ ունեցող բառարանագրության մեջ: Առաջին հայացքից թվում է, որ այսպիսի հարստության առկայությունը նրան քիչ բան էր մնում անելու, սակայն բազմահմուտ հայագետն այս դեպքում էլ կարողացավ իր խոշոր ներդրումն անել:

Ի՞նչն էր ստիպել նրան կյանքի հասուն շրջանում ձեռնարկել այսպիսի հսկայածավալ աշխատանքի: Նա գրում է. «Թեպետ բավական թվով բառարաններ կան տպված հայերեն լեզվով կամ հայերեն ու մի օտար լեզվով՝ բայց ոչ մեկը նրանցից հայերեն լեզվի բառարան չէ, այս բառի ընդարձակ նշանակությունը»<sup>21</sup>: Իսկապես, մեր ունեցած բառարանների մեծագույն մասը թարգմանական բառարաններ են, իսկ բացատրական բառարաններն էլ լավագույն դեպքում ընդգրկում են հայերենի որոշ մի շրջան, հիշենք Հայկազյան և Փեշտամալճյանի բառարանները, որոնք գրաբարի բառապաշարն են ընդգրկում, և այդ բառերի (գրաբար) նշանակությունն են տալիս, իսկ կենդանի հայերենի տասնյակ հազարավոր բառերը, ինչպես և հին բառերի արգի կենդանի նշանակությունները դուրս են մնում: Աշխարհաբարից գրաբար եղած սակավաթիվ բառարաններն էլ, ընականաբար, չունեն գրաբարի և ժամանակակից հայերենի բառերը, դեռ չենք խոսում նրանց փոքր ծավալի մասին, այդպես են և բարբառային բառարանները: Այս պակասը լրացնելու էր կոչված Մալխասյանցի հայերեն բացատրական բառարանը: Դժվարին և շնորհակալ մի գործ

20 Վ. Բ. Լենին, Երկեր, հատ. 35, էջ 471:

21 Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, հատ. 1, Առաջաբան, էջ 6:

էր դա, որի կատարումը կպահանջեր մի խումբ մասնագետների երկարատև աշխատանք:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առաջին տարիներին, երբ հնարավոր է դառնում թողնել մանկավարժական աշխատանքը, Մալխասյանցը Լուսժողովումատի հանձնարարություններով սկսում է հայերեն բացատրական բառարան կազմելու աշխատանքները: Բառարանի բառացանկը կազմելիս նրա առաջ ծառանում է մի զժվարին խնդիր, այն է՝ ի՞նչպես և ո՞րտեղից բաղել այդ բառերը: Կար երկու ճանապարհ. կամ ինքը՝ հեղինակը վերընթերցելով ամբողջ հայ գեղարվեստական, քաղաքական գրականությունն ու մամուլը պետք է վերցնեն հայերենի բոլոր բառերն իրենց վկայություններով, կամ պետք է բավարարվեր եղած բառարանների ընդգրկած բառամթերքով: Առաջինն անհնարին էր մի մարդու համար, ուստի Մալխասյանցն սկսում է իր բառարանի աշխատանքները երկրորդ ճանապարհով: Սկզբում նա հայ բառարաններից ընտրում է հիմնական աղբյուրներ, որոնք մեծ մասամբ հայերեն բացատրական կամ հայերենին առնչված թարգմանական բառարաններ են: Գրանցից վերցնելով բառացանկը, կազմում է իր բառարանի կմախքը. որը լրացնում է զանազան երկլեզվյան թարգմանական և մասնագիտական բառարանների նոր բառերով: Այսպես՝ գրաբարի բառապաշարի լավագույն աղբյուր են նոր Հայկազյան երկհատոր բառարանը և Առձեռն բառարանը, լրացրած Զախչախյանի հայ-իտալերեն և Փեշտմալճյանի բացատրական բառարաններով: Աշխարհաբարի բառապաշարի աղբյուրներն են Փարամաճյանի, Ամատունու, Աճառյանի, Գաղբաշյանի և նոր շրջանի մի քանի այլ բառարաններ: Ստացված բառացանկը Մալխասյանցը համալրել է սովետական շրջանում լույս տեսած բազմաթիվ թարգմանական, մասնագիտական բառարաններից ընտրած նոր բառերով, իր բառարանի բառացանկում ընդգրկված բառերի թիվը հասցնելով 120 հազարի:

Համաձայն հեղինակի ծրագրի, բառարանը պետք է պարունակեր «հայերեն լեզվով գրված ու խոսված բոլոր բառերը մեր մատենագրության սկզբից մինչև մեր ժամանակները, այսինքն՝ բառամթերքները գրաբարի, ստորին գրաբարի, ռամկորենի, արդի գրական լեզվի և զավառական բարբառների՝ իրենց ոճաբանություններով, հին և նոր ժամանակի փոխառյալ բառերը եվրոպական կամ արևելյան լեզուներից, ցույց տալով նրանց ծագումը, գրական լեզվի և բարբառների բառերի ամեն մի նշանակության համար համապատասխան օրինակներ, քերականական ցուցումներ և այլն»<sup>22</sup>:

Մալխասյանցն իր բառարանը կարևոր է համարում երկու տեսակետից՝ գործնական և բանասիրական: «Գործնականում նա ամեն մի գործածողի միջոց է տալիս գտնելու իրեն հետաքրքրող բառը և ծանոթանալու նրա նշանակության հետ մանրամասնորեն: Այս կողմից ներկա բառարանը պետք է փոխարինե բոլոր լույս տեսած հայերեն բառարանները՝ միասին վերցրած և ավելի լայն շափով ու մանրամասնորեն»<sup>23</sup>: Բայց Մալխասյանցն ավելի կարևոր է համարում իր բառարանի մյուս բանասիրական նշանակությունը: «Քանի որ լեզուն մտքի արտահայտիչն է բառերի միջոցով՝ ուստի հայերեն լեզվի բառազանձի միատեղ հավաքումը բովանդակում է այն բոլոր մտքերը, գաղափար-

22 Նույն տեղում:

23 Նույն տեղում:

ները, գործողությունները, առարկաները, որոնցով ապրել է հայ մարդը կամ որոնք մատչելի են եղել նրան ավելի քան 1500-ամյա ժամանակաշրջանում, ուրեմն տալիս են ընդհանուր գաղափար նրա կուլտուրական, տնտեսական, բարոյական և այլ զարգացման»<sup>24</sup>,

Այսպիսով՝ բառարանը տալիս է 1500 տարիների զրավոր և բանավոր հայերենը՝ բառարաններում ամփոփված շափով, բացի այդ այս բառարանում բառերը բերվելով իրենց հին թե նոր նշանակություններով՝ հետազոտողին հնարավորություն են տալիս ուսումնասիրելու յուրաքանչյուր բառի աստիճանական զարգացման ընթացքը, հայտաբերելու ժողովրդի մտածողության այն ուղին, որով նա բառի մի հիմնական նշանակությունից հետզհետե ծագեցրել է նոր նշանակություններ:

Տվյալ բառարանի գերազանցությունը մյուսներից, ուրեմն, միայն բառաբանակի մեջ չէ, այն բարձր է հայերեն բացատրական բառարաններից իր մշակվածությամբ, քանի որ այնտեղ հավաքված է թվարկված բառարանների ամբողջ բառամթերքը, սիստեմավորված, նշված «բառերի նշանակությունները ճիշտ ու մանրամասն», կազմված են օրինակներ նրանց իմաստները լուսարանելու համար, բերված են բազմաթիվ ոճեր և այլն: Կատարելով այս հսկայական աշխատանքը, տալով հայերենի 1500 տարվա պատկերը, հեղինակն իր գործը իրավամբ համարում է մի նոր լիակատար բառարանի սկիզբ: Մալխասյանցի բառարանը ոչ միայն ի մի է հավաքում հայերենի բառային կազմը (բառարանների սահմաններում), այլև ենթարկում է նոր, գիտական ուսումնասիրության:

Մալխասյանցը բառարանի բառահոգվածը կազմելիս գլխաբառից հետո տալիս է անհրաժեշտ քերականական նշումները, ապա անցնում նրա նշանակություններին, իմաստի բացատրությանը, որը կատարում է երկու կերպ՝ նկարագրական ձևով կամ հոմանիշների օգնությամբ, հաճախ այդ իմաստները հաստատելով գրականությունից վերցված վկայություններով կամ իր իսկ կազմած պարզ օրինակներով: Ապա նույն բառի տարբեր նշանակությունները տալիս է ժամանակագրական կարգով՝ հնից դեպի նորը՝ սա ակնառու է դարձնում բառիմաստի զարգացման ուղին, տալիս է բառի իմաստափոխության պատմությունը: Իսկ փոխառյալ բառերի համար նշում է նաև հայերենին հասնելու նրանց ուղին: Այս ամենը նրա բառարանը հանում է սոսկ բացատրական բառարանի շրջանակներից և դարձնում որոշ շափով նաև պատմական, մասամբ էլ ստուգաբանական: Սա բառարանի մյուս առավելությունն է:

Բառարանի հեղինակը հնարավորին շափ լրիվ տալով բառի իմաստաբանական բնութագիրը՝ նույն շափով ներկայացնում է և նրա քերականական պատկերը: Նա չի բավարարվում անունների միայն սեռական հոլովածները նշելով: Տալիս է բառերի՝ թե՛ գրաբարյան և թե՛ ժամանակակից գրական լեզվի հոլովական ձևերը: Օրինակների մեջ բերում է բառի տարբեր ձևեր, հավաքելով բավականաչափ ոճեր ու դարձվածներ, վերջիններիս միջոցով ցուցադրելով բառի ոչ միայն իմաստային, ոճական, այլև քերականական բոլոր ձևերն ու առումները:

Բառարանում օգտագործված են մոտ 50 քերականական տերմինների համառոտագրություններ, որոնք պարզաբանում են բառի քերականական կա-

<sup>24</sup> Նույն տեղում:

որոցվածքը: Մասնագիտական բառերը նույնպես ենթարկված են տարրերակման ըստ գիտության ձյուղերի. որոնց թիվը հասնում է մի քանի տասնյակի: Հատուկ նշումներ են արված բառերի իմաստային երանգներն ու էմոցիոնալ կողմը բացահայտելու համար: Այս կարգի նշումների կողքին կան մի քանի պայմանական նշաններ, որոնք բերվում են գլխարառից առաջ: Դրանց նպատակն է՝ սովորեցնել օգտվողին, որ բառը զրաբար է, բարբառային կամ հնացած:

Պայմանական նշանների բաղմագանությունը ցույց է տալիս, թե ինչ խորություն ու որքան մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկված յուրաքանչյուր բառ այս բառարանում:

Մալխասյանցի բառարանի ամենաարժեքավոր կողմերից է նրա հարուստ ոճարանությունը: Առայժմ հայերեն ոչ մի բառարանում կենդանի խոսքի ոճերի թիվը չի հասնում այդպիսի ճոխության:

Այսպիսով, Մալխասյանցի բառարանը ոչ միայն ամփոփում է հայերենի բառային կաղմը (բառարանների սահմաններում), այլև այն ենթարկում է նոր, գիտական ուսումնասիրության, ինչպես շատ ճիշտ կերպով նկատում է ինքը՝ «միևնույն ժամանակ այս բառարանը իբրև խթան կժառայե և կգյուրացնե նոր բառեր հավաքելու գործը»:

Ստեփան Մալխասյանցի քառահատոր բառարանը հայերենի բառագանձի ամենամեծ ժողովածուն է և մեր բառարանագրության մեջ առայժմ ամենահարուստն է իր բառացանկով, ոճարանությամբ և բառահողվածի գիտական մշակվածությամբ, այն միշտ կմնա որպես հայագիտության լավագույն գործերից մեկը:

Մալխասյանցի բաղմամյա մանկավարժական աշխատանքի, բեղմնավոր գիտական-ստեղծագործական գործունեության շնորհիվ իր պատվավոր տեղն է զրավում հայ մշակույթի և հայագիտության պատմության մեջ որպես նրա էրախտավոր մշակներից մեկը:

СТЕПАН МАЛХАСЯНЦ

Л. Б. ПЕТРОСЯН

(Резюме)

Научно-исследовательская деятельность одного из крупнейших арменоведов, покойного академика АН Армянской ССР Степана Саркисовича Малхасянца (1857—1947) охватывает в основном четыре отрасли: литературу, филологию, языкознание и лексикографию. Благодаря его исследовательским и переводческим работам армянскому читателю стали доступны труды древних армянских историографов в его переводах и изданиях. Большую ценность представляет его труд «К проблеме Моисея Хоренского». Ряд трудов и статей Малхасянца посвящен теоретическим и практическим вопросам армянского языка. Самым капитальным и ценным трудом Малхасянца, завершившим путь его творческой жизни, является «Толковый словарь армянского языка» в четырех томах, удостоенный Государственной премии.